ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵԴԱ Տ. ՕՃԱՆԵԱՆ

# ՄԻՋԱԳԵՏՔ(ԻՐԱՔ)Ի ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԸ ՎԱՂՆՋԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ XX ԴԱՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
200 200

ԵՐԵՒԱՆ
2020

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Օ-451

Խմբագիր՝ բ.գ.թ. Արծուի Բախչինեան
Գրախօս՝ պ.գ.թ. Անի Ֆիշենկճեան

ՕՃԱՆԵԱՆ ՍԵԴԱ Տ.
Օ-451 Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար/.- Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2020.- 214 էջ:

Արդէն հաստատուած իրողութիւն է, որ հայեր բնակութիւն հաստատած են Միջագետք(Իրաք)ի տարածքին հնագոյն ժամանակներէն եւ հանգամանքներուն բերումով, երբեմն շատ կենսունակ եւ երբեմն ալ գրեթէ անհետացած են այս երկրի դարաւոր պատմութեան թատերաբեմէն:

Խնդրոյ առարկայ թեման կ՚ընդգրկէ Միջագետք(Իրաք)ի պատմութեան տարբեր դարաշրջաններ, ամենապայծառ եւ ամենածաղկուն շրջաններէն (Աբբասեան տիրապետութեան ժամանակ) մինչեւ Կեդրոնական Ասիայէն ներխուժող բարբարոս ցեղերուն կողմէ երբեմնի այս շէն ու բարգաւաճ երկիրը աւերակներու վերածուած խաւար շրջանները: Նաեւ ժանտախտի յաճախակի համաճարակները եւ իբր հետեւանք՝ յառաջացած սովերը ճակատագրական եղած են Իրաքի տարածքին ապրող ողջ բնակչութեան համար:

Օգտագործուած են մեր մատենագիրներուն աշխատութիւնները հայ հոգեւոր դասին պատկանող պատանդներուն եւ գերեվարութեան ենթարկուած հայորդիներուն գոյութեան մասին Միջագետքի մէջ: Նմանապէս լայնօրէն օգտագործուած են Օրմանեան պատրիարքի «Ազգապատում»ը, որ իր պատմագիտական մեթոդով Հայոց եկեղեցւոյ եւ յարակից ազգային պարագաներուն ընդարձակ եւ համապարփակ պատմութեան ազգային-մշակութային գանձարան մըն է: Նուազ կարեւոր չեն օտար ուղեւորներուն յիշատակութիւնները այս երկրի տարածքին բնակութիւն հաստատած հայորդիներուն գործունէութեան եւ գրաւած դիրքին մասին:

Միջագետք(Իրաք)ի հայաշատ կեդրոններուն մասին այս ուսումնասիրութիւնը Միջին Դարերէն մինչեւ XX դար հիմնուած է գլխաւորաբար տուեալ ժամանակաշրջանին գրուած ձեռագիրներու յիշատակարաններուն վրայ, որոնց պատմական վկայութիւններուն ստուգութիւնը եւ հաւաստիութիւնը անվիճելի են:

Գիրքը նախատեսուած է սփիւռքագէտ-պատմաբաններուն եւ ընթերցող լայն հասարակայնութեան համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-90-9 © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2020